

ԳԼՈՒԽ ԺԸ ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս խօսքեն վերջը՝ այդ դիրքին մեջ ո՛ր գիտե քանի վայրկեան մնացին այս տարիներով բաժնուած սիրահարքը, երբ Յովնան յանկարծ զգաց, որ Վասկանուշի ծնկուըները կը թեթեւէին, եւ իյնալու վտանգը տեսնելով յափշտակեց զինքը եւ տղու մը պէս բերաւ բազմոցին վրայ դրաւ. բայց սոսկումը զինք առաւ, երբ նշմարեց մահուան դոյնը երեսը պատած, շրթունքները ճերմըկած՝ աչքերու բիբերը փայլը կորուսած բոլորովին վեր յօնքերու կը դիմէին. «Ո՛վ աստուած իմ, — կ'ըսէր, — այսպէս ուրեմն իմ խնդիրքս լսեցիր զիս պատուհասելու համար՝ մահը ես ինձ համար ուզեցի»: Այդ պատերազմի եւ արիւններու մարդը նուազման գաղափարը չունէր, կեանք եւ. մահ միայն կը ճանչէր եւ տեսէր էր, այդ երկուքին մեջի վիճակը չէր գիտէր. ուստի սոսկումը զինք պատեց, իր սիրտը որ կը տրոփէր ձայն տուաւ իրեն եւ ձեռքը դրաւ նորա սիրելի սրտին վրայ եւ այնպէս կարծեց թէ դա էլ կը տրոփէ, յոյս առաւ, թեպէտ իր ձեռաց երակներուն տրոփիւնն էր այն. պատուհան բացաւ, որ օդ մտնէ, եւ դողդոջուն ձեռք այդ կուսական սուրբ եւ պաշտելի մարմնոյն կապերը թուլցուց եւ բաժակ մը ջուր գտնելով ուզեց խմցնել իւր տիրուհուոյն. ցուրտ ջուրը վար չիրթալով որովհետեւ շրթունք եւ ծնօտ կղպուած էին՝ թափեցաւ այդ ձիւնափայլ մարմնոյն վրայ, եւ փոքրիկ ցնցում մը յայտնի ըրաւ Յովնանու թէ կեանք կար. նորա սառած ոտքերը, ձեռքերը կը շփէր իւր հրացայտ դողդոջուն ձեռքերով, փչեց իւր հրաշունչ ոգուով երեսին եւ նուիրական կուրծքին, ուր ձեռք երկնցնել երբեք մտքեն չէր անցել եւ չէր համարձակել. եւ ահա ծնօտները թուլցան, շնչառութիւնն սկսաւ եւ բիբերը իրենց բնական դիրքն առին: «Աստուած իմ, աստուած իմ, — կ'ըսէր Յովնան, — ալյս ի՛նչ շնորհք է»: Եւ ահա հառաչանաց ձայներ մեծ-մեծ շունչեր լսուեցան եւ Վասկանուշ շարժեցաւ շտկուեցաւ. «Ո՛ւր եմ ես», — ըսաւ: «Ա՛հ, Տիրուհիս, հոս...»: «Յովնան, դո՞ւ ես, մ'երթար, էլ մի՛ հեռանար, ոհ, շատ եւ երկայն էր այս միայնութիւնը...», — ըսաւ եւ դարձեալ նոյն առջի վիճակը եկաւ: Իսկ սա կրկնեց իւր շփմունքը իւր շունչը, եւ վերջապէս գոհութեամբ տեսաւ, որ ելաւ իւր տիրուհին ու նստաւ,